ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1965 Общественные науки

Ա. Ա. Սահինյան

ԱՌՎԵՏԱՇԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Կան արվեստագետներ, որոնց ստեղծագործական ուղու մասին խոսել նշանակում է՝ անդրադառնալ արվեստի այդ բնագավառի տվյալ ժամանակաշրջանի զարգացման ամբողջ ընթացքին։

Այդպիսի արվեստագետներից է լայն հետաքրքրությունների, բազմակողմանի ընդունակությունների, միշտ նորն ու առաջադիմականը որոնող, մշտարթուն մտքի տեր, ճարտարապետ Հովհաննես Մարգարյանը։

Մարգարյանի ստեղծագործական կենսագրությունը, նրա ավելի քան 35-ամյա անցած բեղմնավոր ուղին անխզելիորեն կապված են սովետահայ ճարտարապետության կազմավորման ու նրա հետագա զարգացման ամբողջ վերընթացի հետ։

Չկա սովետահայ ճարտարապետության որևէ բնագավառ լինի այդ բնակարանային թե արտադրական, հասարակական ունիկալ շենքերի, թե ճարտարապետական փոքր ձևերի, առողջարանային կառուցումների, թե քաղաքաշինության, որտեղ նա իր ճարտարապետական ինքնատիպ, թարմ ու սրամիտ մտահղացումներով մուտք գործած, հարստացրած ու զարգացման նոր աստիճանի մղած չլինի այն։

Մարգարյանը ճարտարապետ էր, այդ բառի լիակատար հասկացողությամբ, նա իր մեջ ամփոփում էր նախագծողի, կառուցողի և շինարարության հետ կապված ճարտարագիտական գրեթե բոլոր մասնաճյուղերի հանրագիտարանային գիտելիքների դժվարահաս միասնությունը։

Հովհաննես Սարգսի Մարգարյանը ծնվել է 1901 թ. հունվարի 26-ին, այժմյան Նախիջևանի ինքնավար հանրապետության Օրդուբադի շրջանի Քաղաքիկ գյուղում։ Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ապա այն լրացրել է Երևանում։ 1915-ին նա ընդունվում է Երևանի գիմնազիան և հինգ տարի անց հաջողությամբ ավարտում այն։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, հանրապետության նորաստեղծ կառավարության անդրանիկ միջոցառումներից մեկը հանդիսացավ ժողովրդական տնտեսությունը անհրաժեշտ կադրերով՝ նույն թվում տեխնիկական մտավորականությամբ ապահովելու գործը։ Հայրենի երկրում տեխնիկական կրթություն ստացող առաջին ոչ-մեծ խմբի երիտասարդներից մեկը՝ քսանամյա Հովհաննես Մարգարյանն էր։

1921 թ. Մարգարյանն ընդունվում է Երևանի համալսարանի տեխնիկական ֆակուլտետը, 1928 թ. ավարտում է այն և իր գործունեության հենց սկզբից կանգնում է հանճարեղ Թամանյանի շուրջը համախմբված ավագ սերնդի ներկայացուցիչների առաջին շարքերում։

Սովետահայ (ինչպես և ամբողջ սովետական) ճարտարապետության մեջ

առաջին խոշոր ձեռնարկումները կատարվեցին բնակարանային և ֆաբրիկա-գործարանային շինարարության բնագավառում։

Երիտասարդ ճարտարապետն իր առաջին խոսքն, այն էլ բավական թարմ ու հնչեղ, ասաց այդ շնորհակալ ու դժվարին բնագավառում։

Բազմահարկ բնակելի տան շինարարությունը Հայաստանում արդեն զգալի ծավալ էր ստացել, սակայն նախագծվող ու կառուցվող շենքերը հիմնականում երկնում էին Միության միջին և հյուսիսային շրջաններում կառուցվող բազմահարկ բնակելի տան տիպերը։

Անհրաժեշտ էր ստեղծել տեղական կլիմայական ու կենցաղային պայմաններին համապատասխանող բնակելի տան տիպար։

Այդ առաջադրանքը իր փայլուն լուծումը ստացավ Երևանի անասնաբուժական ինստիտուտի պրոֆեսորների և Հայպետշինի աշխատողների բնակելի տների՝ 1928—1929-ին կազմված նախագծերում (հեղինակներ՝ Հ. Մարգարյան, Ա. Ահարոնյան)։ Իր բացատրագրերում Մարգարյանը գրում է. «Այդ խնդիրը մենք լուծեցինք յուրաքանչյուր բնակարանի համար տան երկու կողմերում պատշգամբ և լոջիա ստեղծելու և բնակարաններում միջանցիկ օդափոխություն ապահովելու միջոցով»։ Ելնելով տեղական բնա-կլիմայական ու կենցաղային պայմաններից և օգտագործելով Միության այլ քաղաքների փորձն ու մասնավորապես հայկական ժողովրդական տնաշինարարության ավանդությունները, ըստ էության մշակվեց բազմահարկ բնակելի տան ճարտարապետության հիմքը կազմող բջիջը (սեկցիան)։

Սովետահայ ճարտարապետության կազմավորման արշալույսին, սովետական ճարտարապետության կարևորագույն ժանրերից մեկի, եթե ոչ ամենակարևորի՝ բնակելի տան ճարտարապետության բնագավառում ասված այս թարմ խոսքը սկզբունքորեն այնքան ճշմարտացի էր, այնքան առաջադեմ ու կենսունակ, որ այն աստիճանաբար առավել կատարելագործվելով, բազմաթիվ տարբերակներով մինչև այսօր էլ լայնորեն կիրառվում է։ Դա մի լուրջ ներդրում էր Սովետական Հայաստանի բազմահարկ բնակելի տան ճարտարապետության կազմավորման գործում։

Նույն այդ ժամանակաշրջանում Մարգարյանը ստեղծագործական նշանակալից նվաճման հասավ արդյունաբերական շենքերի ճարտարապետության բնագավառում։ Երևանի կարի գործարանի շենքում (նախագծված 1930-ին ճարտ. Ա. Ահարոնյանի հետ միասին) արտադրական պրոցեսների նպատակահարմար կազմակերպումն ու աշխատանքի առողջապահական լավագույն պայմանների ստեղծումը զուգակցվում են շենքի ներսի տարածական-ծավալային հորինվածքի տեկտոնիկ հնարամիտ լուծումների հետ. երկաթ-բետոնե նուրբ կամարների և ապակու ընդարձակ մակերեսների սրամիտ հաջորդականությամբ ստեղծված ծածկը ոչ միայն կատարում է իր կոնստրուկտիվ և ուտիլիտար հաջողակ ֆունկցիան, այլև դառնում արտահայտչականության յուրահատուկ միջոց, ստեղծում էսթետիկական-գեղարվեստական մի ներդործուն միջավայր։ Ստեղծագործական նույն սկզբունքն է բնկած նաև 1933 թ. Մարգարյանի նախագծած ծխախոտի ֆաբրիկայի կառուցվածքում։

Այս գործերը հանդիսացան արդյունաբերական ճարտարապետության բմբռնման նոր մեկնաբանության համարձակ և ուղենշային օրինակներ, որոնք որոշակիորեն նպաստեցին գործարանային շինարարության մեջ իշխող միակողմանի, զուտ տեխնոլոգիական տեսանկյունից դիտվող հասկացողությունների արմատական բեկման գործին։

Ստեղծագործական բուռն վերելք ապրեց Մարգարյանը հատկապես երևնական թվականների սկզբներին՝ ճարտարապետության և քաղաքաշինության հարցերի վերաբերյալ կուսակցության ու կառավարության հայտնի որոշումներից հետո, երբ սովետական ամբողջ ճարտարապետությունը թևակոխեց իր զարգացման նոր փուլը[1]։

Պայքար էր ծավալվել մի կողմից՝ ճարտարապետության բնագավառում ֆորմալիստական տեսության ամեն տեսակի արտահայտությունների, ճարտարապետական երկի դաղափարայնության, նրա սոցիալական դերի անտեսման

Նկ. 1. Երևան. կարի գործարանի ներքին տեսքի նախագիծը.

դեմ, մյուս կողմից՝ անցյալի ժառանգության անքննադատ օգտագործման՝ ռեստավրատորականության ու էկլեկտիզմի դեմ։

Երկրի ճարտարապետական կյանքում տեղի ունեցած այս մեծ բեկման շրջանում Մարգարյանը՝ որպես ժամանակի առաջընթացը խորապես ըմբռնող, խորհող, ձեռք բերած նվաճումներով չհանգստացող, մշտապես որոնող արվեստագետ, հասավ ստեղծագործական ակնբախ հաջողությունների։

Նրա նախագծերով ու անմիջական հսկողությամբ մայրաքաղաքում և հանրապետության տարբեր վայրերում բարձրացան հասարակական, բնակելի, հիվանդանոցային, դպրոցական և այլ բազմաթիվ շենքեր, որոնցից ոչ միայն հեղինակի, այլև սովետահայ ճարտարապետության տվյալ ժամանակաշրջանի անցած ուղու ընկալման տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում

1 Տե՛ս ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. Հունիսյան պլենումի «Մոսկվայի քաղաքային տնտեսության և ՍՍՌՄ քաղաքային տնտեսության զարգացման մասին» որոշումը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը և այլն։

մասնավորապես Երևանի գլխավոր ունիվերսալ խանութի շենքը (նախագծված՝ 1935 թ. ճարտարապետներ Ա. Ահարոնյանի, Մ. Մազմանյանի, Գ. Քոչարի հետ միասին), գրքի պալատի շենքը (նախագծված՝ 1937 թ. ճարտ. Մ. Մազմանյանի հետ միասին), Հայէներգոյի վարչության շենքը (1938 թ.) և Արզնի բուժավայրի լոգարանների շենքը (1939 թ.)։

Չնայած առանձին դեպքերում տեղ գտած ոչ բոլորովին թարմ ճարտարապետական ձևերին ու մանրամասներին, այդ գործերից յուրաքանչյուրը որպես ճարտարապետական ամբողջական երկ, իր նախորդի համեմատությամբ, զարգացման նոր բարձրության է մղված, և ակնհայտորեն արտացոլում է Մարգարյանի արվեստի աստիճանական աճման վերընթացի ճանապարհը։

Այստեղ սոցիալիստական ռեալիզմի ճարտարապետության սկզբունքների կիրառման ուղղությամբ կատարվող ստեղծագործական որոնումներն առավել նպատակասլաց են, ճարտարապետի խոսքը է լ ավելի որոշակի։ Այսպես, ունիվերսալ խանութի հսկայածավալ շենքի թե՛ քաղաքաշինական լուծումն ու դյուրմբռնելի հստակ հատակագիծը, թե՛ ներքին տարածական առինքնող հորինվածքն ու արտաքին ծավալները, թե՛ կոնստրուկտիվ լուծումներն ու հարթությունների մշակումը և թե՛ նույնիսկ շինանյութը՝ խստաշունչ որձաքարի խիստ արտահայտիչ կապտավուն ֆակտուրան, լրացնելով միմյանց, ամբողջ կառուցվածքին հաղորդում են որոշակի հանդիսավորություն և ընդգծում նրա հասարակական բնույթը։

Ունիվերսալ խանութի կառուցվածքի համեմատությամբ, գրքի պալատում, անցյալի, մասնավորապես ազգային ժառանգության ավանդություններ օգտագործման ավելի ընդարձակ փորձ կատարվեց։

Սա ճարտարապետական մի բարդ կոմպլեքս է, որը բռնելով 2-րդ շրջանային, Տերյան և Կիրովի փողոցների միջև ընկած մի խոշորագույն թաղամաս, պետք է իր մեջ բովանդակի գրքի տպագրության հետ կապված տեխնոլոգիական բոլոր պրոցեսների և հրատարակչական կազմակերպությունների ամբողջ սիստեմը։

Գլխավոր ճակատում (2-րդ շրջանային փողոցի վրա) ստեղծելով ծավալների տարածական խաղ, չնայած ազգային ճարտարապետության առանձին մանրամասների օգտագործման, շենքի ամբողջ օրգանիզմի համար ընտրվել էր ճարտարապետական միասնական թեմա՝ դասական արվեստի սկզբունքների վրա խարսխված սյունաշարքը։ Դժվար է ներկայումս իրականացված հատվածի հիման վրա եզրակացություններ անել շենքի ճարտարապետական ընդհանուր կերպարի վերաբերյալ։ Այժմյան հատվածը, անշուշտ, կհնչի այլ կերպ, երբ ավարտվի ամբողջ շենքի կառուցումը։ 1960 թվականից վերսկսվել են նրա նախագծման ու կառուցման աշխատանքները։

Նշված ժամանակաշրջանում Մարգարյանի ստեղծագործության օրինաչափ զարգացման արգասիքը հանդիսացավ Հայէներգոյի վարչության շենքը։ Այն հատակագծային ուրվանկարով (անկյունային լուծում) և տարածական-ծավալային ընդհանուր հորինվածքով հաստատուն կերպով տեղավորվելով մայրաքաղաքի երկու առավել նշանակալից (Աբովյան և 2-րդ շրջանային) փողոցների անկյունում, կազմակերպում և ճարտարապետական որոշակի արտահայտչականություն է տալիս քաղաքաշինական այդ ուշագրավ հանգույցին։

Ճարտարապետական հարթությունների մշակման, արտահայտչական առանձին միջոցների ստեղծման ուղղությամբ կատարվող պրպտումները (գլխավոր ճակատներում վայելչագեղ համաչափության որմնասյուների ռիթմիկ

շարք, մեծ վարպետությամբ մշակված հյութեղ մանրամասներ և այլն) հանդիսանում են սովետահայ ճարտարապետության մեջ տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած ստեղծագործական որոնումների արտացոլում։

Հայէներգոյի վարչության շենքում ձեռք բերված ակնառու հաջողություններից հետո Մարգարյանի բաղմերանգ սաղանդը առանձնակի շողաց Արգնի բուժավայրի լոգարանների շենքի ճարտարապետության մեջ։ Արգնիի հանքային ջրերի բուժիչ հատկությունների հռչակը վաղուց տարածվել էր հանրապետության, անգամ Միության սահմաններից դուրս։ Խնդիր էր դրված այդ ջրերի

Նկ. 2. Երևան. Հայէներգոյի վարչության շենքը։

շրջակայքում արդեն տարածված առողջարանների ճարտարապետական խմբի կենտրոնում բարձրացնել բուժավայրի լոգարանների շենքը, որի կառուցման վայրի համար ընտրվել էր դեպի Հրազդանի ափը մեծ թեքությամբ իջնող զառիվայրի բարդ տեղանքը։ Ստեղծագործող արվեստագետի համար չափազանց հրապուրիչ, բայց նույնքան և դժվարին խնդիր։ Մարգարյանը պատասխանատվության մեծ զգացումով ձեռնամուխ եղավ այդ գործին։

Շենքը նախագծվեց 1939 թ., իսկ ներքին ձևավորումը (ինտերիերը) մշակվեց 1944 թ. ճարտարապետ Նեկտար Բաշինսկի մասնակցությամբ։

Կառույցի հաջողության առաջին գրավականը բարդ տեղանքի (ռելիեֆի) վրա նրա ճշմարտացի տեղադրումն էր։ Տեղանքի սահմանափակ հնարավորությունների թելադրանքով ընտրված շենքի ուղղանկյուն հորինվածքը գլխավոր առանցքով դնելով զառիվայրի թեքությանը զուգահեռ, ստացվեց աստիճանաձև երեք հարթակ, որոնց վրա և բարձրացավ շենքի սրամիտ և գեղարվեստական

արտահայտչականության տեսակետից հետաքրքիր տարածական-ծավալային ամբողջ կոմպոզիցիան։

Ներքին հարթակի վրա բարձրացվեց երեք հարկ, միջին հարթակի վրա՝ երկու, վերին հարթակի վրա՝ մեկ։ Շենքում նախատեսվող ջրարուժարանի, ածխաթթվային լոգարանների և ֆիզիոթերապիայի՝ երեք բաժիններից յուրաքանչյուրն առանձին-առանձին զետեղվեց մեկական հարկում։

Ամբողջ կառույցի ներքին կյանքը կազմակերպվեց այնքան հստակ ու դյուրըմբռնելի, որ տեղանքից բխող խոչընդոտները ոչ միայն հաղթահարվե-



Նկ. 3. Արցնի. լոգարանի շենքը։

ին, այլև դարձան առաջադրված խնդրի առավել հաջող լուծման նպաստավոր պայմաններ։ Հառիվայրի թեքության վրա լայն ճակատով ստեղծված աստիճանները յուրովի նախապատրաստելով բնությունից դեպի շենքի ներքին տարածության անցումը, մեծ հանդիսավորությամբ առաջնորդում են դեպի շենքի գլխավոր շքամուտքը, դեպի լոգարանների ընդհանուր նախասրահը։ Ճարտարապետական խիստ ձևերի, ժողովրդական արվեստի կենսախինդ մոտիվների և գունային նուրբ երանգների ներդաշնակությամբ բարձր հուզականության հասցված նախասրահից մարմարյա աստիճանները մարդուն ուղեկցում են դեպի շենքի երկրորդ, ամենահիմնական հարկաբաժինը։

Այս մասը ճարտարապետական ամբողջ մտահղացման ամենաուշագրավ հատվածն է։

Ստեղծված է բացօթյա մի ընդարձակ բակ, որի երկու հակադիր կողմերում զետեղված են հիգիենայի և բալնեոլոգիական տեխնիկայի բոլոր օրենքներով կառուցված ու կահավորված լոգարանների շարքերը, իսկ երրորդ կողմում՝ այդ շարքերը իրար միացնող ոժանդակ մյուս սենյակների խումբը։

Կանաչի ու ջրի գունեղ պատկերներով մշակված բացօթյա բակը ամռան ամիսներին կատարելով յուրահատուկ սպասարանի դեր, ստանում է իր ուտի-

լիտար որոշակի ֆունկցիան և դառնում ճարտարապետական ողջ օրգանիզմի ուրամարանական, անբաժանելի մասը։

Այսպիսով, Մարգարյանը հասավ ճարտարապետական այնպիսի մտահղացման, որն առավելագույն չափով բավարարում է շենքի ներքին բովանդակությունից բխող՝ նրա ֆունկցիոնալ խիստ կանոնիկ պայմաններին. իր հորինվածքով, ճիշտ գտնված մասշտաբով, կոնստրուկտիվ հնարներով, ընտրված շինանյութով, ճարտարապետական լեզվի հստակությամբ լինելով ճշմարիտ, ամբողջությամբ միահյուսվում է շրջապատի լեռնային բնությանը, լրացնում, հարստացնում է այն։

Արզնիի լոգարանների շենքը ստեղծագործական լուրջ թռիչք է, ճարտարապետական լիահնչուն խոսք, որը իրավամբ համարվում է սովետահայ ամբողջ ճարտարապետության ճանաչված նվաճումներից մեկը։

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից Մարգարյանը մեկնում է ռազմաճակատ։ Պատերազմի երրորդ տարում ՍՍՌՄ ճարտարապետության ակադեմիայի և ՍՍՌՄ ճարտարապետների միության միջնորդությամբ նա ետ է կանչվում բանակից և նորից անցնում ստեղծագործական աշխատանքի։

1944 թ., պատերազմական ժամանակաշրջանի ծանր պայմաններում, անվանի ճարտարապետը նշանակվում է Հայաստանի Մինիստրների սովետին առընթեր ճարտարապետական գործերի վարչության պետ։ Նա ոչ միայն մեծ հանդգնությամբ ձեռնամուխ է լինում պատերազմի տարիներին ընթացող և մասնավորապես հետպատերազմյան ժամանակաշրջանում երկրում ծավալվող շինարարության նախագծման գործի կազմակերպմանը, այլև ստեղծագործական ամենաակտիվ մասնակցություն ունենում դրանում, մշտարթուն կերպով հետամուտ լինում ճարտարապետության և շինարարության առջև ծառացած հուզող հարցերի լուծմանը։

1944 թ., երբ հանրապետությունում զգացվում էր շինափայտի խիստ պակաս, Մարգարյանը մշակեց պեմզա-բետոնե թեթև թաղակապ մոնոլիտ ծածկի կոնստրուկցիան։

1947 թ. կոնստրուկտոր Ա. Սարգսյանի գործոն մասնակցությամբ նա մշակեց փորձնական առանձնատների նախագծեր, արմատավորված պեմզա-բետոնե սալիկներից ստեղծված ձեղնահարկի ծածկի կոնստրուկցիայով, որի փորձարկումը տվեց միանգամայն դրական արդյունք։

Մեծ է Մարգարյանի վաստակը հանրապետության մասսայական շինարարությունը տիպարային բարձրորակ նախագծերով ապահովելու, մասնավորապես բնակարանների ու բնակելի տների տիպերի վերամշակման ու կատարելագործման բնագավառում, որը երկար տարիներ ղեկավարում էր նա։

Մարգարյանն իր մեծ փորձը և գիտելիքները ի սպաս է դրել նաև հանրապետության քաղաքների, ավանների ու շրջկենտրոնների հատակագծման գործին, թե՛ իբրև նախագծային կազմակերպությունների ղեկավար և թե՛ որպես առանձին աշխատանքների հեղինակ (Հրազդանի շրջկենտրոնի, Մաղկաձորի մանկական ամառանոցի հատակագծերը և այլն)։

Ճարտարապետի հետպատերազմյան շրջանի ստեղծագործությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Երևանի կոնյակի գործարանի ճարտարապետական խոշոր խումբը (1945—1950), Սասունաշենի ակումբը (1946 թ.), Կիրովական քաղաքի գլխավոր հրապարակի բնակելի տները (1950 թ.), Կիրովականի քաղսովետի շենքը (1952 թ.), Արզնիի հանքային ջրերի գալերեան

(1956 թ., ճարտ. Շ. Ազատյանի հետ միասին), Կիրովականի հյուրանոցի շենքը (1959 թ., ճարտ. Բ. Արզումանյանի հետ միասին) և այլն։



Նկ. 1. Երևան. կոնյակի գործարանի շենքը։

Ստեղծագործական լայն հնարավորություններ ընձեռող, քաղաքաշինական բարդ ու հետաքրքիր խնդիր էր դրված Ճարտարապետ Մարգարյանի առջև Երևանի կոնյակի գործարանի նախագծման ժամանակ։

Մայրաքաղաքի գեղարվեստական ամենահրապուրիչ հանդուցյալներից մեկում, որի միջով դարերի ընթացքում ապարները ճեղքելով, իր ջրերի համար հուն էր բացել հորդառատ Հրազդանն, արդեն բարձրացել էին սովետահայ ճար-

տարապետության ճանաչված նվաճումներից երկուսը։ Հրազդանի ձախ ափին ժայռերից վեր էր խոյացել, կարծես այդ ժայռերի և ջրերի հետ մեկտեղ ծրնված, նրանցից դուրս ու ջունչ առած՝ Արարատ տրեստի գինու մառանների հրաշակերտ շենքը, իսկ նրա դիմաց, Հրազդանի ափերն էր իրար միացնում «Հաղթանակի» կամուրջը։

Անհրաժեշտ էր կամուրջի առանցքի ուղղությամբ գտնվող բարձունքի վրա այնպես տեղադրել կոնյակի գործարանի շենքը, որ արտադրական պրոցեսների ճիշտ կազմակերպման հետ զուգընթաց, այն ներդաշնակեր շրջապատի ճարտարապետական միջավայրի հետ։ Ճարտարապետը այստեղ նույնպես հասավ իր առջև դրված խնդրի լուծմանը։ Գործարանի արտադրության ներքին կյանքից բխած ծավալները իրենց ձևերով, համաչափություններով ու մասշտաբով լրացնելով և հավասարակշռելով միմյանց, բարձունքի վրա ստեղծում են տարածական այնպիսի խաղ ու հետաքրքիր ուրվանկար (սիլուետ), որ ոչ միայն օրգանապես մտնում են արդեն կազմավորվող ճարտարապետական անսամբլի մեջ և ընդգծում նրա կոմպոզիցիոն գլխավոր առանցքը, այլև մայրաքաղաքի այդ հատվածում առաջացնում բազմաթիվ կետերից ընկալվող ճարտարապետական մի վեհանիստ համայնապատկեր։

Թևկուզ և ճարտարապետական որոշ մասերի ու մանրամասների մշակումներում դրսևորվում են քառասնական թվականներին բնորոշ, շքեղության ձգտելու առանձին երևույթներ, կոնյակի գործարանի խոշոր խմբի ճարտարապետությունն իր ընդհանուր մտահղացումով (արտադրության մեջ յուրաքանչյուր առանձին կառույցի ճիշտ տեղադրում, տեխնոլոգիական ֆունկցիայի հստակ կատարում, տարածական-տեկտոնիկ ճշմարիտ լուծումներ, ճարտարապետական զուսպ ու արտահայտիչ լեզու, շինանյութի նպատակահարմար օգտագործում և այլն) լինելով ազգային ճարտարապետական ժառանգության առաջադիմական ավանդությունների վրա խարսխված արդյունաբերական ճարտարապետության լավագույն նմուշներից, դարձավ սովետահայ ամբողջ ճարտարապետության ու քաղաքաշինության ակնառու նվաճումներից մեկը։

Քաղաքաշինական ավելի մեծ ու պատասխանատու հարցեր ծառացան Մարդարյանի առջև Կիրովական քաղաքի գլխավոր հրապարակի կառուցապատման նախագծի մշակման ու իրականացման ընթացքում։ Ստեղծվում էր հիմնովին սոցիալիստական վերակառուցման ենթարկվող քաղաքի սիրտը, նրա ընդհանուր հատակագծի կոմպոզիցիոն միջուկը, որը տարածվելով քաղաքային երկու կարևորագույն մայրուղիների՝ Լենինի պողոտայի և Կիրովի փողոցի հանդիպման հանգույցում, ուներ ուղղանկյան և սուրանկյուն սեղանի համակցությամբ կազմված բավական բարդ եզրագծեր։ Ընդ որում, ուղղանկյան հատվածի կենտրոնական մասում կառուցվող ՀԿՊ քաղաքային կոմիտեի քառահարկ շենքը, որը իրականացվում էր ուրիշ հեղինակի (ճարտ. Զ. Բախշինյանի) նախագծով, լինելով հրապարակի հատակագծային հորինվածքի գլխավոր առանցքի վրա, տեղանքում գրված իր դիրքով ստանում էր ելակետային նշանակություն։

Անհրաժեշտ էր հրապարակը կազմակերպող մնացած մյուս բոլոր կառուցվածքների համար գտնել այնպիսի լուծում, որ այն չգրկեր յուրաքանչյուր շենքն իր ինքնուրույնությունից և միաժամանակ ապահովեր ճարտարապետական ամբողջական անսամբլի ստեղծումը։

Եվ ահա, նախագծվում է կառուցապատման մի սխեմա, ըստ որի, Կիրո-

վի փողոցի վերջավորության վրա, միանման հատակագիծ ունեցող բնակելի երկու հսկայածավալ շենքեր լայն ճակատով թեքվում են աջ ու ձախ և ամրացնում հրապարակի գգալի մասը, ձևավորում նրա գլխավոր մուտքը, իսկ քաղաքային կոմիտեի շենքի մոտ համախմբվում հասարակական նույն բնույթի կառուցվածքներ՝ քաղաքային սովետի և հյուրանոցի շենքերը (վերջինները նախագծված են ճարտ. Բ. Արզումանյանի հետ միասին), որոնք պարուրելով հրապարակի ազատ մնացած տարածությունը, ամբողջացնում են նրա հատակագծային ողջ հորինվածքը։

Քաղաքային կոմիտեի շենքի գլխավոր ճակատի երեք հարկը ընդգրկող խորաքանդակ որմնասյուների ռիթմիկ շարքի հանդիսավորության համեմատությամբ, քաղաքային սովետի շենքի ճարտարապետությունն ունի զուսպ,

Նկ. 5. Կիրովական. բնակելի տուն Կիրովի անվան հրապարակում։

մեղմ արտահայտություն։ Ճարտարապետական հակադրության նման եղանակով ընդգծվում է ընդհանուր անսամբլի մեջ քաղաքային կոմիտեի շենքի ճարտարապետությանը տրվող առաջնային դերը, միաժամանակ փորձ արվում ցույց տալ քաղաքային սովետի շենքի ֆունկցիոնալ նշանակությունից բխող յուրահատկությունը։ Վերջինիս հաճելի համաչափության կամարակապ շքամուտքը և նրա վերևում խարսխված մարդկային ամբողջական արձանները ստեղծելով գլխավոր ճակատի խաղաղ ֆոնի վրա ճարտարապետական ուժեղ շեշտ, ակնհայտորեն նպաստում են շենքի հասարակական բնույթի բացահայտմանը և էմոցիոնալ որոշակի արտահայտչականություն հաղորդում նրա ճարտարապետությանը։

Ըստ էության ճարտարապետական նման մեկնաբանություն է, ստացել քաղաքային սովետի շենքին սիմետրիկ տեղադրված հյուրանոցը, որի աշտարա-

կաձև անկյան վերընթաց սլացքը ամրացնում, կազմակերպում է պողոտայից հրապարակին անցնող քաղաքաշինական հանգույցը։

Բնակելի շենքերը հրապարակահայաց իրենց կենտրոնական ծավալների, այդ ծավալների հարթությունների վրա բացված՝ բնակելի տան ներքին բովանդակությունից բխող խոր լոջիաների և առաջին հարկի գրեթե ամբողջ երկայնությամբ ձգված կամարակապ բաց սրահների շնորհիվ դառնում են մյուս կառույցներին լիահնչուն, հրապարակի ճարտարապետական-կոմպոզիցիոն մտահղացման հիմնական բաղադրիչ մասերը։ Հրապարակը կազմակերպող բոլոր շենքերը ինչպես տարածական-ծավալային կառուցվածքով, մասշտաբով, գրեթե միանման բարձրությամբ, շինանյութով ու դունային երանգներով, այնպես էլ ճարտարապետական ձևերի ու մանրամասների ներդաշնակ մշակումով, լրացնում են միմյանց և հրապարակի կենտրոնում գրանիտե պատվանդանից վեր խոյացող՝ հեղափոխության բոցաշունչ տրիբուն Սերգեյ Կիրովի քարակերտ արձանի հետ միասին, ստեղծում էմոցիոնալ բարձր արտահայտչականությամբ ոժտված ճարտարապետական ամբողջական անսամբլ։

Հիսունական թվականների առաջին կեսից Սովետական Հայաստանի ճարտարապետությունը թևակոխում է իր կարգացման նոր, ավելի բարձր փուլը։

Շինարարության խնդիրներին նվիրված 1954 թ. կրեմլյան խորհրդակցությունը երկրի կառուցողների և ճարտարապետների առջև դրեց շինարարության և նախագծման գործի արմատական բարելավման հարցը։ Ընդ որում ճարտարապետների ուշադրությունը հատկապես բևեռվեց նախորդ ժամանակաշրջանի կառուցվածքներում տեղ գտած ավելորդությունների, ճարտարապետական հին ձևերի մեխանիկական կրկնության, անհարկի մոնումենտալության ու կեղծ հանդիսավորության ձգտելու վնասակար երևույթների վերացման վրա։

Սովետահայ ճարտարապետության մեջ կատարվող այս ժամանակաշրջանի ստեղծագործական որոնումների լավագույն նմուշներից են՝ Երևանում կառուցվող մաթեմատիկական մեքենաների գիտա-հետազոտական ինստիտուտի խոշորագույն շենքի նախագիծը (նախագծված՝ ճարտարապետներ Բ. Արզումանյանի և Շ. Ազատյանի հետ միասին) և Նորքի ճոպանուղին (նախագծված ճարտ. Բ. Արզումանյանի հետ միասին)։ Առաջինի կառուցումը սկսվել է դեռևս 1962 թ., իսկ երկրորդինը՝ 1963 թ.։ Իրենց թարմ մտահղացումով և ճարտարապետական-կառուցողական արվեստի ճշմարտացի ըմբռնումով այդ երկու շենքերը աներկբայորեն կդասվեն Սովետական Հայաստանի ճարտարապետության նորագույն շրջանի նվաճումների շարքը։

Ստեղծագործական աշխատանքներին զուգընթաց, Մարգարյանը հաճախ մասնագիտական մամուլում հանդես է եկել սովետահայ ճարտարապետության տարբեր հարցերին նվիրված արժեքավոր հոդվածներով։ Այդ հոդվածներում և ճարտարապետների հանրապետական մի շարք համագումարներում կարդացած իր զեկուցումներում[2] նա սովետական ճարտարապետության սկզբունքների գիտական մեկնաբանման, տեղական յուրահատուկ պայմանների առանձնահատկությունների մասնագիտական խոր վերլուծության միջոցով քննարկում է սովետահայ ճարտարապետության տեսության ու գործնական հանգուցային շատ հարցերը։

---

2 Հայաստանի ճարտարապետների 4-րդ և 5-րդ համագումարներում հիմնական զեկուցողը եղել է Հ. Մարգարյանը։

1957 թ. ականավոր ճարտարապետը Սովետական Միության ճարտարապետների ու ճարտարագետների պատվիրակության կազմում մեկնում է Հարավսլավիա և շուրջ քսան քաղաքներում (Բելգրադ, Լուբլյանա, Դուպլիցա, Զագրեբ, Դուբրովնիկ, Տիտոգրադ, Սարաեվո և այլն) ուսումնասիրում հարավսլավական ժողովուրդների արդի ճարտարապետության ու շինարարության փորձը։ Այդ ուղևորության մասին նա գրել է շատ ուշագրավ մի աշխատանք, որը, ցավոք, դեռևս չի հրատարակված և ձեռագրի իրավունքով գտնվում է Հայաստանի ճարտարապետների միության գրադարանում։

Այստեղ Մարգարյանն իբրև խոշոր ճարտարապետ ու կառուցող հանգամանորեն անդրադառնում է հարավսլավական ժողովուրդների ժամանակակից ճարտարապետության ու շինարարության վիճակին, կատարում մասնագիտական թարմ ու համոզիչ մտահանգումներ, իբրև նրբանկատ արվեստագետ ու քաղաքացի՝ հետաքրքիր մտքեր, խոհեր հայտնում նրանց մշակույթի ու արվեստի, կենցաղի, սովորությունների ու բարքերի վերաբերյալ։

Ճարտարապետական իր բեղմնավոր գործունեության համար ճանաչված արվեստագետը 1950 թ. ընտրվում է ՍՍՌՄ ճարտարապետության ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1956 թ., սովետական կառավարության որոշմամբ, մտնելով ՍՍՌՄ շինարարության և ճարտարապետության նորաստեղծ ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմի մեջ, արժանանում է ճարտարապետության ակադեմիկոսի բարձր կոչմանը։

1961 թ. Հայաստանի ճարտարապետական հասարակայնությունը երախտագիտության ջերմ զգացումով նշեց Հովհաննես Մարգարյանի ծննդյան 60-ամյա հոբելյանը, իսկ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահությունը նրան շնորհեց հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։ Նա պարգևատրված էր նաև մի շարք շքանշաններով և մեդալներով։

Երկար տարիներ Մարգարյանը դասախոսել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։ Նա հմուտ ու սիրված ուսուցիչ էր ոչ միայն ինստիտուտի ներսում, այլև ստեղծագործական կազմակերպություններում (ճարտարապետական № 3 արվեստանոց, «Հայպետնախագիծ», «Երևաննախագիծ» ինստիտուտներ և այլն) աշխատող բազմաթիվ երիտասարդ ճարտարապետների համար։

Այդ ամենի հետ մեկտեղ ճարտարապետության ականավոր վարպետը միշտ ժամանակ էր գտնում զբաղվելու հասարակական ամենաակտիվ գործունեությամբ։ Նա Երևանի քաղաքային սովետի մի քանի գումարման դեպուտատ էր, հանրապետության գիտա-տեխնիկական բազմաթիվ հանձնաժողովների անդամ, 1955 թ. մինչև 1963 թ. Հայաստանի ճարտարապետների միության անփոփոխ նախագահը։

1963 թ. դեկտեմբերի 26-ին անժամանակ մահը ընդհատեց Հովհաննես Մարգարյանի ստեղծագործական բազմաթիվ նոր մտահղացումներով լի կյանքը։ Նա դադարեց ստեղծագործելուց իր ուժերի ամենածաղկուն շրջանում։ Սակայն արդեն իսկ եղած վաստակը բազմերանգ արվեստագետի անունը ամբողջովին միահյուսել է հայրենի ճարտարապետության տվյալ ժամանակաշրջանի զարգացման ամբողջ վերընթացի հետ։ Մեր հին ու նոր քաղաքների հրապարակներում ու մայրուղիներում, քաղաքային ընդարձակ թաղամասերում ու փողոցներում, գեղատեսիլ բնության տարբեր մասերում ու առանձին բնակավայրերում ճարտարապետական կերպար ստացած նրա ինքնատիպ մտահղացումներից յուրաքանչյուրն առանձին վերարտադրում է սովետահայ ճար-

տարապետության ուղու որոշակի փուլը, նշանավորում երկրի ճարտարապետական-կառուցողական արվեստի զարգացման համապատասխան աստիճանը։ Այդ գործերը խարսխված են սովետական ճարտարապետության ժողովրդայնության, նրա հումանիստական էության հիմքը կազմող՝ մարդու նկատմամբ ցուցաբերվող հոգատարության ամենավեհ սկզբունքի վրա։

Հավատարիմ իր ստեղծագործական ըմբռնումներին՝ միշտ օգտակարի և գեղեցիկի, տնտեսականի ու առաջադիմականի ներդաշնակության դիրքերից մոտենալ ինչպես մեծ կտավի, այնպես էլ փոքր ձևի գործերին, Մարգարյանի արվեստի ելակետը, առաջնորդող նշանաբանը միշտ եղել է մարդը, ժողովուրդը։

А. А. Саинян

ВЫДАЮЩИЙСЯ ЗОДЧИЙ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Резюме

Творческая биография О. Маркаряна неразрывно связана с становлением и развитием армянской советской архитектуры. Нет такой ее области, в которую он не внес бы значительного вклада своими самобытными произведениями. Маркарян — автор около семидесяти осуществленных проектов.

Уже на первых порах молодой зодчий активно включился в дело проектирования жилищного и промышленного строительства, развернувшегося в Армении в тридцатые годы.

В здании Ереванской первой швейной фабрики рациональная организация производственных процессов и создание лучших гигиенических условий труда сочетаются с остроумным конструктивным решением объемно-пространственной композиции интерьера, где сочетание тонких железобетонных арок и больших остекленных поверхностей в покрытии не только удачно выполняет свою конструктивную и утилитарную функцию, но и превращается в своеобразное средство выразительности, создает впечатляющую художественно-эстетическую среду.

Те же принципы лежат в основе проектирования здания Ереванской табачной фабрики. Эти работы явились смелыми примерами новой трактовки понимания промышленной архитектуры.

С первых дней Отечественной войны Маркарян на фронте. После демобилизации, в 1944 году, видный зодчий назначается начальником Управления по делам архитектуры при Совете Министров Армянской ССР. Он не только энергично берется за организацию дела проектирования развернувшегося после войны строительства, но и принимает весьма активное творческое участие в нем.

В послевоенном творчестве мастера особое место заняли такие работы, как ванное здание на курорте Арзни, Ереванский коньячный завод, крупный архитектурный комплекс центральной площади гор. Кировакана, Ереванский дом радио и многие другие.

Мастерство Маркаряна сказалось в умении простыми средствами

создать органичные произведения, в которых находили правдивое отражение многообразные природные, градостроительные и другие условия.

За свою плодотворную архитектурную деятельность О. Маркарян в 1950 году был избран членом-корреспондентом Академии архитектуры СССР, а в 1956 году вошел в первый состав действительных членов вновь созданной Академии строительства и архитектуры СССР.

Верный своим творческим принципам, в большом и малом руководствуясь соображениями гармонии между пользой и красотой, экономичным и прогрессивным, Маркарян исходил из того, что руководящим девизом искусства является человек, народ.